

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2015 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 1 ՆԻՍԻ

## ՈՐՈՇՈՒՄ

*I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2013-2014 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ 2014 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետի դ) ենթակետով՝*

*ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2013-2014 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ 2014 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2013-2014 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

*II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի ֆինանսական հաշվետվությունը՝ համալսարանի 2014 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ՝*

*ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

*III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2015 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝*

*ԳՊՀ խորհուրդը որոշում է.*

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2015 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2015 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Խորհրդի նախագահ՝

Հ. Հ. Հակոբյան